գունաւոր նկարներով: Միեւնոյն ժամանակ սովորութիւն էր, որ տօն օրերին նրանք իրար նուէր էին բերում զանազան գեղարուեստական առարկաներ. դրա համար ամեն դայմիօսը իր պալատում պահում էր մի արուեստագէտ, որ իր բոլոր ջանքը գործ էր դնում գեղեցիկ իրեր հնարելու եւ ուրիշներից այդ բանի մէջ գերազանց լինելու համար. պարզ է, որ այդ հանգամանքը ճապոնական արուեստի զարգացմանը շատ է նպաստել:

Ֆէօդալական կարգերի անկման հետ արուեստագէտները զրկուեցին իրանց խրախուսող մեկենասներից եւ հետզհետէ դառնում են սոսկ արհեստաւորներ:

Կիոտօն ընդհանուր ճապոնական տիպ ունի, միայն աւելի մեծ չափերով:

Փողոցները քիչ աւելի լայն են. տներն աւելի գեղեցիկ եւ կեանքն էլ աւելի եռուն: Աջ ու ձախ արագ սլանում է էլեքտրական տրամւայը. հեռախօսի թելերի խիտ ցանցը վազում է ամեն ուղղութեամբ. ու ամեն կողմ տիրում է էլեքտրական լուսաւորութիւնը: Եւրոպական կառք գրեթէ չկայ. փողոցներում վազ են տալիս ջինրիկիշաները:

Քաղաքի կեդրոնումն էինք արդէն, երբ հանդիպեցինք մի գեղեցիկ միաձի կառքի, որի առջեւից վազում էին երկու արագավազ սպասաւորներ ի պատիւ կառքում նստած բարձրաստիճան անձնաւորութեան:

—Աւագ քահանայապետն է,— բացատրեց ինձ ջինը:

Դա իմ տեսած միակ կառքն էր:

Շուտով հասանք Ja-Amy հիւրանոցը, որ մեզ յանձնարարել